ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ



ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO • WORLD SCHOOL • ÉCOLE DU MONDE

CIS MEMBER

ՄԲ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 25.02.2025թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ 3
2. ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ 3
3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ 3
4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ 4
5. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 5
6. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 5
7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 6
8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 7
9. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ 8
10. ՀՂՈՒՄՆԵՐ 9
11. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ 9
12. ՀԱՎԵԼՎԱԾ 1 10
13. ՀԱՎԵԼՎԱԾ 2 11

1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1. Սույն քաղաքականությունը կարգավորում է Շիրակացու ճեմարանի Միջազգային բակալավրիատի Դիպլոմային ծրագրի ընդունելության ընթացակարգերը (Շիրակացու ճեմարան):
1.2. Ընդունելության հիմունքներն են՝
1.2.1. հավասար հնարավորություններ և անխտրականություն,
1.2.2. շնորհալի և տաղանդավոր անհատների բացահայտում,
1.2.3. հավակնոտ, ժամանակակից և բարձրորակ կրթության խթանում:
1.3. Միջազգային բակալավրիատի Դիպլոմային ծրագրում (այսուհետ՝ ՄԲԴԾ) ընդունելությունն անցկացվում է երկու փուլով՝ ապրիլ և հունիս ամիսներին:
1.4. Շիրակացու ճեմարանում ընդունելությունն անցկացնում է Շիրակացու ճեմարանի ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) և հաստատում գլխավոր տնօրենը:

2. ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

Միջազգային բակալավրիատի Դիպլոմային ծրագրի (այսուհետ՝ ՄԲԴԾ) ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ ընդունելության քննությունների և հարցազրույցների, ինչպես նաև մոտիվացիոն և երաշխավորող նամակների հիման վրա: ՄԲ դիպլոմային ծրագրում սովորելու համար կարող են դիմել՝

2.1. 10-րդ դասարանի աշակերտներ՝ անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կարգավիճակից*
2.1.1. 2025-2026 ուստարվա համար այն ուսանողները, ովքեր պատրաստվում են ուսումնառել ՄԲԴԾ-ում ՀՀ ազգային ուսումնական ծրագրի հետ համատեղ, կարող են մասնակցել միայն ապրիլյան նստաշրջանին:

2.2. Ուսանողներ, ովքեր օտարերկրյա երկրների քաղաքացիներ են և պատրաստվում են դիմել Ավագ դպրոցի վերջին 2 տարվա ծրագրին:

2.3. ՄԲԴԾ 1-ին կուրսի սովորողներ, ովքեր կտեղափոխվեն ՄԲ այլ դպրոցներից՝ Շիրակացու ճեմարանի Դիպլոմային ծրագրում իրենց կրթությունը շարունակելու համար՝ հաշվի առնելով սովորողի ընտրած առարկաները:

*ՀՀ քաղաքացիներին ՄԲԴԾ առաջարկվում է միայն ՀՀ ազգային ուսումնական ծրագրի հետ համատեղ (Շիրակացու ճեմարանի հեղինակային ծրագիր): Շիրակացու ճեմարանի հեղինակային ծրագրի համար կիրառվում են հավելյալ վճարներ, խնդրում ենք ստուգել ուսման վճարների ցանկը:

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Ճեմարանի ՄԲԴԾ ընդունելությանը մասնակցելու համար դիմորդները պետք է՝

3.1 լրացնեն ընդունելության դիմում-հայտը՝ անցնելով հետևյալ հղումով https://shirakatsy.am/forms,
3.2 գրեն հետաքրքրվածության նամակ (motivation letter) և ներկայացնեն երկու երաշխավորագիր դպրոցի աշխատակիցներից,

3.3 հանձնեն քննություններ անգլերեն և մաթեմատիկա առարկաներից,

3.4 մասնակցեն ինտելեկտի ընդհանուր զարգացման մակարդակը գնահատող հոգեբանական թեստավորմանը,

3.5 մասնակցեն հարցազրույցների, որոնք կազմակերպվում են ՄԲԴԾ-ում իրենց կողմից ուսումնասիրվելիք առարկաների շրջանակներում,

3.6 լրացնեն առարկաների ընտրության ձևաթուղթը՝ վերոնշյալ փուլերը հաղթահարելու դեպքում (տե՛ս Բաժին 9՝ Առարկայական ընտրություն):

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1 Քննությունները հաջողությամբ հանձնած դիմորդները պետք է ներկայացնեն բոլոր պահանջվող փաստաթղթերը և հաղթահարեն Շիրակացու ճեմարանի ընդունելության հանձնաժողովի կողմից սահմանված համեմատական վերլուծության վրա հիմնված նվազագույն անցողիկ շեմը, ինչպես նաև ցուցաբերեն բարձր կատարողականություն հարցազրույցի ընթացքում: Հաշվի կառնվեն նաև մոտիվացիոն և երաշխավորող նամակները:

4.2 Հատուկ դեպքերում պահանջներից որևէ մեկին չբավարարող թեկնածուների համար ընդունող հանձնաժողովը կարող է որոշում կայացնել թեկնածուին ՄԲԴԾ ընդունել պայմանական հիմունքներով՝ մեկ ակադեմիական կիսամյակի փորձաշրջանով: Ժամկետը ավարտելուց հետո Շիրակացու ճեմարանի տնօրենության խորհուրդը որոշում է՝ արդյոք սովորողը կարող է շարունակել ուսումը ՄԲԴԾ-ում (հիմնվելով սովորողի առաջադիմության և նրա նկարագրի վրա):

4.3 Սովորողները կարող են ընդունվել ՄԲԴԾ միայն այն դեպքում, եթե առկա է ՀՀ ազգային ուսումնական ծրագրի 10-րդ դասարանն ավարտած կամ դրան համարժեք ապացույց: Շիրակացու ճեմարանի միջին դպրոցից հեռացված սովորողները (ուսման կամ վարքագծի համար) կարող են ընդունվել ՄԲԴԾ միայն ընդունող հանձնաժողովի առաջարկությամբ: Ընդունող հանձնաժողովի նման առաջարկությունները կարող են մերժվել Շիրակացու ճեմարանի տնօրենության խորհրդի կամ գլխավոր տնօրենի կողմից:

4.4 Այլ դպրոցների Դիպլոմային ծրագրից դիմող սովորողների համար բոլոր առարկաներիից կանցկացվի նախնական գնահատում (ոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 15-ը):

4.5 Շիրակացու ճեմարանի այն սովորողները, ովքեր դուրս են մնացել ՄԲԴԾ-ից, Շիրակացու ճեմարանի տնօրենության խորհրդի որոշմամբ կարող են համարվել Շիրակացու ճեմարանի հեղինակային կրթական ծրագրի շարունակող թեկնածուներ: Տեղափոխման վերաբերյալ դրական որոշման դեպքում ուսանողը պետք է անցնի ընդունելության ընթացակարգ՝ Շիրակացու ճեմարանի համապատասխան ընդունելության քաղաքականությանը համապատասխան: Դիմորդը կարող է դիտարկվել հեղինակային ծրագրում միայն վերը նշված պահանջը բավարարելուց հետո:

5. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

5.1 Ճեմարանի սան հանդիսացող դիմորդները պետք է առցանց ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

5.1.1. Երաշխավորագիր կրթօջախի երկու աշխատակիցներից (տե՛ս Հավելված 1),
5.1.2. Լուսանկար (3x4),
5.1.3. Քննավարձի վճարման կտրոն:

5.2 Ճեմարանի սան չհանդիսացող դիմորդները պետք է առցանց ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

5.2.1. Ծննդյան վկայականի կամ անձնագրի պատճեն,
5.2.2. Գնահատականների վերաբերյալ պաշտոնական տեղեկանք,
5.2.3. Երաշխավորագիր դպրոցի երկու աշխատակիցներից (տե՛ս Հավելված 1),
5.2.4. Լուսանկար (3x4),
5.2.5. Տեղեկանք բնակավայրից,
5.2.6. Դիմորդի բժշկական քարտ (նախկին 026 ձև),
5.2.7. ՀՀ քաղաքացիություն չունեցող դիմորդների դեպքում՝ բժշկական ապահովագրություն ուսումնառության ժամանակահատվածի համար,
5.2.8. Քննավարձի վճարման կտրոն:

**Դիմում-հայտերի ընդունման և ընդունելության գործընթացին մասնակցելու համար սահմանվում է 15,000 ՀՀ դրամ միանվագ վճար (քննավարձ), որը վերադարձման ենթակա չէ: Քննավարձն անհրաժեշտ է փոխանցել Ամիո բանկի 1150003768028007 հաշվեհամարին:*
***Քննավարձից ազատվում են երկկողմանի ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների, բազմազավակ (5 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների երեխաները, իսկ այլ դեպքերում՝ Ընդունող հանձնաժողովի որոշմամբ:*

6. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

6.1. Ընդունելության պահանջները հաջողությամբ ավարտելուց հետո մինչև մայիսի 25-ը թեկնածուները ստանում են ընդունելության առաջարկ կամ պայմանական ընդունելության առաջարկ: Ընդունելության առաջարկը կամ պայմանական ընդունելության առաջարկը Ճիրակացու ճեմարանի կամքն է՝ ուսանողներին ընդունելու ՄԲԴԾ՝ պայմանով, որ ուսանողը բավարարում է ընդունելության բոլոր պայմաններին: Առաջարկը պարտադիր է Ճիրակացու ճեմարանի համար՝ բացառությամբ սույն հոդվածում նշված դեպքերի:

6.2. Ընդունելության առաջարկը կամ պայմանական ընդունելության առաջարկը կարող է հետ կանչվել, եթե

6.2.1. սովորողը չի ավարտել 10-րդ դասարան կամ համարժեք դասարան,
6.2.2. խախտել է Ճեմարանի կամ որևէ այլ դպրոցի կարգապահական կանոնակարգ,
6.2.3. բացահայտվել են խարդախության ապացույցներ սովորողի կողմից ներկայացված

ցանկացած փաստաթղթում,

6.2.4. գտնվել է ակադեմիական ազնվության խախտման ապացույց,

6.2.5. սովորողը հեռացվել է Շիրակացու ճեմարանից կամ որևէ այլ դպրոցից ցածր առաջադիմության, վարքագծային խնդիրների և այլնի պատճառով,

6.2.6. ընդունող հանձնաժողովը ստացել է նոր տեղեկություն դիմորդի վերաբերյալ, որը նրանց կարծիքով կարող է խոչընդոտել դիմորդի կամ այլ ուսանողների կրթական գործընթացին,

6.2.7. նմանատիպ այլ դեպքեր:

6.3. Ընդունելության առաջարկ կամ պայմանական ընդունելության առաջարկ ստանալուն պես, թեկնածուները և նրանց ծնողները պետք է լրացնեն «Ծրագրին միանալու» հայտը (տե՛ս Հավելված 2) և 10 օրվա ընթացքում փոխանցեն 100,000 դրամ կանխավճար Դիպլոմային ծրագրում ուսումնառության համար: Հայտի լրացման և կանխավճարի փոխանցման գործընթացը անհրաժեշտ է կատարել ընդունելության կամ պայմանական ընդունելության առաջարկը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում: Այս կանխավճարը կատարվում է ուսման վարձավճարի առաջին մասի դիմաց, եթե թեկնածուն որոշում է ուսումնառությունը շարունակել Դիպլոմային ծրագրում: Սակայն եթե թեկնածուն հրաժարվում է ուսումնառությունը շարունակել Դիպլոմային ծրագրում, ապա կանխավճարը չի վերադարձվում: Կանխավճարի վերադարձը հնարավոր է միայն այն դեպքում, եթե թեկնածուն դիմի կրթաթոշակի համար, հրաժարվի առաջարկված գումարից և որոշի չշարունակել ուսումնառությունը Դիպլոմային ծրագրում:

6.4. Բոլոր գործող ընդունելության առաջարկների և պայմանական ընդունելության առաջարկների համար ընդունելության որոշումը կամ համապատասխանաբար պայմանական ընդունելության որոշումը կայացվում է մինչև հուլիսի 7-ը:

6.5. Ընդունելության գործընթացի վերջին փուլը թեկնածուի և նրանց ընտանիքների հետ կրթական ծրագրի իրականացման պայմանագրերի կնքումն է մինչև օգոստոսի 31-ը:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

7.1. Ճեմարանի 10-րդ դասարանից փոխադրված և մրցույթը հաղթահարած դիմորդներին, ովքեր սովորելու են նաև ճեմարանի հեղինակային կրթական ծրագրով, կարող են տրամադրվել ֆինանսական արտոնյալ պայմաններ՝ հաշվի առնելով հետևյալ կետերը՝ ֆինանսական օժանդակության տրամադրումը կարգավորվում է Շիրակացու ճեմարանի կրթաթոշակների կարգով: Կիրառվում են հետևյալ հիմնական պայմանները՝

7.1.1. դիմորդի առաջադիմությունը,

7.1.2. ընտանիքի ֆինանսական կարգավիճակը:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Ընդունելությանն առնչվող, բայց սույն քաղաքականությամբ չնախատեսված բոլոր այլ հարցերը որոշում է Շիրակացու ճեմարանի տնօրենության խորհուրդը՝ հաշվի առնելով Ընդունող հանձնաժողովի առաջարկությունները:

8.2. Բացառիկ դեպքերում Ընդունող հանձնաժողովը կարող է որոշել վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերին ընթացք տալ:

8.3. Փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները վերբեռնվում են առցանց դիմումների գրանցման համակարգ (հղումը տեղադրված է Շիրակացու ճեմարանի պաշտոնական կայքում): Հայտը վավեր է համարվում, եթե առցանց հայտի գրանցման համակարգում աստղանիշով (*) նշված բոլոր փաստաթղթերը վերբեռնված են, իսկ ոչ աստղանիշով թվարկված փաստաթղթերը ենթակա են պարտադիր ներկայացման մինչև պայմանագիրը կնքելը:

8.4. Սույն կանոնակարգով, ինչպես նաև այլ կանոնակարգերով սահմանված ժամկետները, ըստ անհրաժեշտության, կարող են փոփոխվել: Փոփոխությունների դեպքում դրանք կհրապարակվեն https://shirakatsy.am/ կայքում:

8.5. Քաղաքականությունը հասանելի է անգլերենով և հայերենով: Լեզուների միջև որևէ անհամապատասխանության դեպքում առաջնահերթությունը տրվում է փաստաթղթի անգլերեն տարբերակին:

Ծանոթագրություն. Հայտը լրացնելուց հետո համակարգը ինքնաշխատ հաղորդագրություն է ուղարկում հայտում նշված էլ. հասցեին՝ նշելով, որ հայտը հաջողությամբ ընդունվել է:

9. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

9.1. Հիմնական առարկաներ. Դիպլոմ ստացող ԴԾ թեկնածուները ուսումնասիրում են ստորև ներկայացված առարկայական խմբերից ընտրված վեց առարկաներ: Սովորաբար յուրաքանչյուր խմբից մեկ առարկա պետք է ընտրվի որպես ավելի բարձր մակարդակով (ԲՄ) և ստանդարտ մակարդակով (ՍՄ) առարկա ուսումնառելու համար:

Առարկայական խմբերը հետևյալն են՝

9.1.1. Լեզու և գրականություն

9.1.2. Լեզվի յուրացում

9.1.3. Անհատներ և հասարակություններ

9.1.4. Գիտություններ

9.1.5. Մաթեմատիկա

9.1.6. Արվեստներ

9.2. Առանցքային բաղադրիչներ. Բացի հիմնական առարկաներից, ԴԾ-ն ունի նաև հետևյալ առանցքային բաղադրիչները՝ ընդարձակ էսսե , իմացության տեսություն և ստեղծագործականություն, ակտիվություն, ծառայություն (արտադասարանական նախագծեր):

9.3. Ընտրություններ կատարելիս ուսանողը պետք է հաշվի առնի՝

9.3.1. Իր հետաքրքրությունների ոլորտները և ինչն է նա լավ անում,

9.3.2. Ինչ կցանկանար սովորել համալսարանում,

9.3.3. Ինչ նախապայմաններ ունի համալսարանը:

9.4. Դիպլոմի համար վեց առարկա ընտրելիս ուսանողները կարող են վերցնել հետևյալ երկու տարբերակներից որևէ մեկը.

ա. Երկու առարկա ստանդարտ մակարդակում (ՍՄ) և չորս առարկա բարձր մակարդակում (ԲՄ)

բ. Երեք առարկա ՍՄ-ում և երեք առարկա ԲՄ-ում:

9.5. Դիպլոմային ծրագրում սովորելու ընթացքում բոլոր ուսանողները պետք է ստանան 150 ժամ յուրաքանչյուր ՍՄ-ի համար և 240 ժամ յուրաքանչյուր ԲՄ-ի համար:

9.6. Բոլոր ԲՄ առարկաները պետք է դասավանդվեն ծրագրի երկու տարվա ընթացքում, և հիմնական պահանջները նույնպես պետք է բավարարվեն այդ նույն երկու տարվա ընթացքում:

9.7. Առարկաների ընտրության ձևը հասանելի է հետևյալ հասցեով՝
https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScJKlmxexxt-c03vqWEZ7YDW07VyJwVYvKBuafW8DcRikhLIQ/viewform

10. ՀՂՈՒՄՆԵՐ

- The Diploma Programme: From principles into practice, IBO, 2009
- The Diploma Programme: Guide To School Authorization: Diploma Programme, IBO, updated 2016
- The Diploma Programme: Assessment Procedures, IBO, 2023

11. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգված, Արտեմ Միկոյան փողոց, 35
Հեռ.՝ *+374 44 64 01 26, +374 10 68 01 02*
Էլ. հասցե՝ info@shirakatsy.am, admissionoffice@shirakatsy.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՄԲ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ *(ձևաթուղթը տեղադրված է նաև ճեմարանի կայքում)*

1. Դիմորդ_____

(անուն, ազգանուն)

2. Դպրոց_____

3. Ձեր գնահատականը կօգնի մեզ լիարժեք կարծիք կազմելու դիմորդի մասին, ուստի խնդրում ենք գնահատել ստորև ներկայացված բնութագրիչներով.

ԲՆՈՒԹԱԳՐԻՉ	ԳԵՐԱԶԱՆՑ	ԼԱՎ	ԲԱՎԱՐԱՐ	ԱՆԲԱՎԱՐԱՐ
ՄՏԱԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ				
ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ				
ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ				
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
ԽՆԴԻՐՆԵՐ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ				
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՋՆՎՈՒԹՅՈՒՆ				
ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ				
ԽՄԲՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ				
ԱՆԿԱԽ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ				
ՋԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ				
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄ				
ՀՈՒՄԱԼԻՈՒԹՅՈՒՆ				
ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ				
ԷՄՈՑԻՈՆԱԼ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ				
ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ				

4.Որքա՞ն ± ժամանակ է, որ ճանաչում եք դիմորդին:

_____

5. Որքա՞ն լավ և ի՞նչ լիազորությունների շրջանակում եք ճանաչում դիմորդին:

_____

_____

_____

_____

ՁԵՐ ԱՆՈՒՆԸ_____ ՍՏՈՐԱԳՐ._____

(անուն, ազգանուն)

ՊԱՇՏՈՆ_____ԱՌԱՐԿԱ_____

ՀԵՌ՝_____ ԷԼ. ՀԱՍՑԵ_____

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Խնդրում ենք սույն երաշխավորագիրը չտրամադրել դիմորդին, այլ փակ ծրարով կամ էլեկտրոնային տարբերակով ուղարկել հետևյալ հասցեով՝ Արտեմ Միկոյան 35, 0079, Երևան, ՀՀ, admissionoffice@shirakatsy.am:

CONFIDENTIAL

ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՄԲ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԾՐԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԱՅՏ *(ձևաթուղթը տեղադրված է նաև ճեմարանի կայքում)*

Անձնական տվյալներ (Ուսանող)

- Անուն, ազգանուն, հայրանուն՝ _____
- Ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ՝ _____
- Քաղաքացիություն՝ _____
- ՀԾՀ համար՝ _____

Ծնողի/ օրինական խնամակալի տվյալներ

- Անուն, ազգանուն, հայրանուն՝ _____
- Ուսանողի հետ կապը (հայր/մայր/խնամակալ) _____
- Անձնագիր՝ _____
- ՀԾՀ համար՝ _____
- Կոնտակտային տվյալներ՝
    - Հեռախոս՝ _____
    - Էլ.հասցե՝ _____
    - Հասցե՝ _____

Կրթություն (Ուսանող)

- Նախկին ուսումնական հաստատություն՝ _____
- Ավարտելու տարեթիվ՝ _____

Ծրագրին միանալու հայտի ներկայացում

Ես՝ _____ս, սույնով հաստատում եմ իմ համաձայնությունը, որ _____ -ը իր ուսումնառությունը 2025-2026 ուստարում շարունակի Շիրակացու ճեմարանի Ավագ դպրոցի Դիպլոմային ծրագրում: Հաստատում եմ, որ ծրագրում ընդգրկվելու համար անհրաժեշտ

է կատարել 100,000 ՀՀ դրամ կանխավճար, որը վերադարձման ենթակա չէ, և ես իրավասու եմ կատարելու այս ֆինանսական պարտավորությունը:

Ստորագրություն՝ (Ծնող/ Խնամակալ) _____

Ամսաթիվ՝ _____

Սանի ստորագրություն՝ _____

Ամսաթիվ՝ _____